



**Burbank Unified School District**  
Superintendent's Office  
1900 W. Olive Avenue  
Burbank, CA 91506  
Ph: 818.729.4422 • Fax: 818.729.4550

**Board of Education**  
Dr. Armond Aghakhanian, President  
Steve Frintner, Vice President  
Charlene Tabet, Clerk  
Steve Ferguson  
Dr. Roberta Reynolds

**Superintendent**  
Matt Hill, Ed.D.

16 April 2020

Հարգելի ընտանիքներ, աշակերտներ և աշխատակիցներ.

Ճգնաժամը կարող է բաժանել կամ համախմբել համայնքը: Ես շարունակում եմ ոգեշնչվել այն բանից, թե ինչպես են մեր աշակերտները, ծնողները/պահապանները, ուսուցիչները, մյուս աշխատակիցները և ղեկավարությունը աշխատում իրար հետ այս դժվարին ժամանակշրջանում: Մենք կշարունակենք սովորել և հարմարվել ուսուցման այս նոր մոդելին ուսումնական տարվա վերջին 5 շաբաթների ընթացքում: Ահա այս շաբաթվա կարևոր նորությունները.

**Գնահատականներ.** Միջանկյալ և միջանակարգ դպրոցների աշակերտները **20 շաբաթվա վերջում կրեդիտ կամ ոչ մի կրեդիտ գնահատական կստանան իսկական գնահատականի փոխարեն:** Աշակերտները պետք է շարունակեն հեռակա ուսուցման դասընթացները՝ 20 շաբաթվա վերջնական գնահատականի փոխարեն կրեդիտ ստանալու համար: Մա նշանակում է, որ աշակերտները պետք է փորձեն ժամանակին կատարել ուսուցչի կողմից հանձնարարված առաջադրանքների մեծ մասը: Այն աշակերտները, ովքեր չկատարեն առաջադրանքները կրեդիտ չեն ստանա 20 շաբաթվա գնահատականի փոխարեն: Այս որոշումը կայացվել է ուսուցիչների, տնօրենների, ուսումնական հաստատությունների ղեկավարների, շրջանային մակարդակի կառավարիչների, համալսարանների ընդունելության գրասենյակների պաշտոնյաների և Լոս Անջելեսի գավառի գերատեսուչների առաջարկների հիման վրա (Լոս Անջելեսի գավառի դպրոցների 68%-ը անցնում է կրեդիտ կամ ոչ մի կրեդիտ գնահատման համակարգին): Մենք շնորհակալություն ենք հայտնում մեր ուսուցիչներին համագործակցության և այսօր, փուլըմբռնման հուշագիրը ստորագրելու համար, որը ժամանակավորապես կփոխարինի գնահատման համակարգին մինչև ուսումնական տարվա վերջը:

Կրեդիտ կամ ոչ մի կրեդիտ գնահատման համակարգը օգուտ կբերի մեր աշակերտներին **ստանց բացասականորեն ազդելու այն աշակերտների վրա, ովքեր ցանկանում են շարունակել ուսումը բարձրագույն ուսումնական հաստատություններում:** Կալիֆոռնիայի նահանգի և այլ նահանգների համալսարանները չեն տուգանի աշակերտներին, եթե նրանք չեն հանձնել պետական միօրինականացված քննությունները կամ այս կիսամյակի ընթացքում կնշեն, որ կրեդիտ ստացել կամ չեն ստացել տվյալ առարկայից: Մեր աշակերտների հավաստիացումների ամենապարզ բացատրությունը տվել է Հարվարտ համալսարանը, որի լրիվ նամակը կարելի է կարդալ [այստեղ](#): Ահա նաև Կալիֆոռնիայի համալսարանների նամակները.

- ա. [Կալիֆոռնիայի համալսարաններ - University of California \(UC\)](#)
- բ. [Կալիֆոռնիայի պետական համալսարան - California State University \(CSU\)](#)
- գ. [Կալիֆոռնիայի քոլեջների և համալսարանների անկախ կազմակերպություն - Association of Independent California Colleges and Universities \(AICCU\)](#)

ԲԴՄՇ-ն մեկ կիսամյակի փոփոխություն է կատարել կուտակված կրեդիտները նշելու համար, որոնք ոչ մի դրական կամ բացասական ազդեցություն չեն ունենա գնահատականների միջին թվաբանական թվի (GPA) վրա: Համալսարանները մեծապես կհենվեն պաշտոնական փաստաթղթի վրա, որը կոչվում է դպրոցի պրոֆիլ: Այն կբացատրի հանգամանքները համալսարաններին, ներառելով ավարտական պահանջները, գնահատականների միջին թվաբանական թիվը, առաջադեմ դասերը (honors courses), SAT/ACT քննությունների արդյունքները և այլ տարրեր, որոնք եզակի են դարձնում դպրոցը: Այս դեպքում, կրեդիտ կամ ոչ մի կրեդիտ գնահատականի անցնելը կնկարագրվի որպես համաշխարհային համաճարակի արդյունք և **կընդունվի առանց տույժ վճարելու**: Այս անցումը ժամանակավոր է և կդադարեցվի, երբ աշակերտները և աշխատակիցները աշնանը վերադառնան դպրոց:

Տարրական դպրոցի 3-րդ եռամսյակ. Ուսուցիչները կշարունակեն առաջադրանքներ տալ և ստուգել նրանց կատարած աշխատանքը, բայց տառային կամ թվային գնահատական չեն նշանակի: Գնահատականների թերթիկների 3-րդ եռամսյակի սունյակը դատարկ կմնա, իսկ ակնարկների բաժնում, ուսուցիչները կնկարագրեն, թե ինչպես են աշակերտներն աշխատել հեռակա ուսուցման ընթացքում: Այդ ակնարկներ գրելը կամավոր է 2019-20 ուսումնական տարվա վերջին եռամսյակի ընթացքում:

**Ներկա գտնվելը.** Ինչպես արդեն նշել ենք, գնահատականները կնշանակվեն հիմնվելով աշակերտների կատարած աշխատանքի վրա: Դասերին ներկա գտնվելը հսկվում է ուսուցիչների և դպրոցի աշխատակիցների կողմից և նրանք կապ կհաստատեն ձեզ հետ, եթե աշակերտները չկատարեն հեռակա ուսուցման դասերը:

**Տարեվերջյան միջոցառումներ.** Այս շաբաթ, նահանգապետ Նյուսոմն ասաց. «Ձանգվածային հավաքույթների հեռանկարը լավագույն դեպքում աննշան է, քանի դեռ չենք ստացել մասսայական իմունիտետ և պատվաստումներ այս հիվանդության դեմ: Լայնամասշտաբ միջոցառումները, որոնք հարյուրավոր, հազարավոր, տաս հազարավոր անձանոթ մարդկանց է հավաքում իրար կողք կողքի տեղի չի ունենա հունիս, հուլիս, օգոստոս ամիսների ընթացքում»: Մինչ մենք ցանկանում ենք տարեվերջյան միջոցառումների մասնակցել, դեռ պետք է սպասել և տեսնել, թե երբ թույլ կտրվի այն անել, ինչպես այն թույլ կտրվի և ինչ սահմանափակումներ կունենա աշակերտներն ու նրանց ընտանիքները: Միննույն ժամանակ, դպրոցներն աշխատում են համացանցային միջոցառումներ պատրաստել աշակերտների տարեվերջյան նվաճումները նշելու համար: Առաջիկա շաբաթների ընթացքում, տնօրենները կհաղորդեն այդ մանրամասների մասին: Մա այն տարին չէ, որ որևէ մեկը նախատեսել էր դպրոցն ավարտող մեր աշակերտների համար: Հետևյալ հոդվածը շատ կհետաքրքրի մեր աշակերտներին, նրանց ընտանիքներին և աշխատակիցներին.

<https://thriveglobal.com/stories/the-year-without-graduation/>

**Տեխնոլոգիայի ընտանեկան աջակցություն.** Այն ընտանիքները, որոնց տեխնիկական օգնություն է հարկավոր, խնդրում ենք սեղմել այս հղումը. <http://burbankusd.org/Student-Parent-Tech-Support-Request>

**Հոգեկան առողջության ռեսուրսներ.** Հիշեցնելու կարգով ցանկանում եմ հայտնել, որ Բրբենքի ընտանեկան ծառայությունների ընկերությունը (Burbank Family Service Agency (FSA)) բաց է և ուղղորդումներ է ընդունում հեռախոսով օգնություն (therapy) ցույց տալու համար: Զանգահարել 818-845-7671 հեռախոսահամարով կամ էլեկտրոնային նամակ ուղարկել <https://familyserviceagencyofburbank.org/> հասցեին: Ռեսուրսներ է պարունակում նաև մեր կայքէջը. <https://www.burbankusd.org/Page/2688>

Աշխատելով իրար հետ, մենք կկառուցենք ավելի ուժեղ ԲԴՄՇ: Շրջանային նորությունների հաջորդ թողարկումը տեղի կունենա **հինգշաբթի, ապրիլի 23-ին:**

Հոգատարությամբ,

Մաթ



Դոկտոր Մաթ Հիլլ  
Գերատեսուչ